


Ապլ իկացիա «Նավակ»



ԳուՆՏՎՈՐ թղթերից պատրաստենք Նավակ:
ԱՆհրաժեշտ են՝ գուՆՏՎՈՐ թղթեր, սպիտակ թուղթ,
սոսինձ, մկրատ, քանոն, գուՆՏՎՈՐ մատիտներ:



ԳուՆՏՎՈՐ թղթերից կտրում ենք հետևյալ երկրաչափական պատկերները՝
Կապույտ թղթից ուղղանկյուն՝ ջրի համար,
Շագանակագույն թղթից շրջան, որի կեսն անհրաժեշտ է Նավակի համար,
և երկար, նեղ ուղղանկյուն՝ կայմի համար,
Դեղին թղթից եռանկյուն և քառակուսի՝ առագաստների համար և արև,
և Հայաստանի դրոշի համար կտրում ենք փոքրիկ ուղղանկյուններ՝
կարմիր, կապույտ և դեղին թղթերից:




Այժմ սպիտակ թղթի վրա սոսնձի օգնությամբ հերթով սկսում ենք ամրացնել պատկերները.

Շագանակագույն շրջանը բաժանում ենք 2 հավասար մասի և դրա մի մասը սոսնձում ենք սպիտակ թղթին՝ նախօրոք տակը ամրացնելով կայմը: Այնուհետև կապույտ ուղղանկյուն թղթի մի եզրը ալիքաձև դարձնելով , ամրացնում ենք նավակի վրա.



Եռանկյուն թուղթը մի գագաթից և հանդիպակաց կողմի կենտրոնից ծալում ենք երկու մասի, քառակուսի թուղթը ևս անկյունագծով ծալում ենք երկու մասի: Դրանցից յուրաքանչյուրի մի կողմի վրա սուսինձ եք քսում և ամրացնում կայմի վրա: Առագաստների մյուս կողմերը ազատ «ծածանվում են»:



Թղթի մի անկյունում ամրացնում ենք արևը, իսկ կայմի ծայրին՝ սոսնձում ենք դրոշը.



Գունավոր մատիտների օգնությամբ արևին ժպիտ ենք նկարում և նավակի վրա գրում անունը: Նավակը պատրաստ է.

